Հավելված 1

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՂԿԱՎԱՐՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

30.04.2022

2020թ. մարտ-մայիս ամիսներին ԵՊՀ Իջևանի մասաճյուղում բոլոր գործող կրթական ծրագրերը վերանայվել են՝ հիմք ունենալով ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ հաստատված «ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման» կարգը: Կրթական ծրագրերում առանձնացվել են մասնագիտական 5-ից 6 դասընթացներ, նրանք ամրագրվել են որպես հետազոտական բաղադրիչ պարունակող դասընթացներ, ապա վերանայվել են այդ դասընթացների և, հետևաբար նաև կրթական ծրագրերի վերջնարդյունքները, գրականության ցանկը, կազմվել են կրթական ծրագրերի նոր մասնագրերը, իսկ այդ դասընթացները դասավանդող դասախոսները վերանայել են իրենց դասընթացների փաթեթները:

2020-2021 ուստարին մեկնարկել է վերանայված կրթական ծրագրերով և 4-րդից 7-րդ կիսամյակներում ուսանողներին հետազոտական աշխատանքներում լիարժեք ներգրավելու ակնկալիքներով:

2021-2022 ուստարվա առաջին կիսամյակում տարբեր կրթական ծրագրերով մասնաճյուղի 4 ֆակուլտետների 16 կուրսերում 27 մասնագիտական դասընթացների շրջանակներում իրականացվել են հետազոտական աշխատանքներ:

Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժինն առաջին կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո, մարտի սկզբին, ուսանողների կրթական կարիքների վերհանման շրջանակներում, հարցման միջոցով ուսումնասիրել է հետազոտական աշխատանքների կազմակերպումից և գնահատումից ուսանողների բավարարվածությունը:

Հարցման նպատակն էր բացահայտել հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ուսանողների մոտ ի հայտ եկած խնդիրները, հավաքագրել առաջարկներ հետազոտական աշխատանքների կազմակերպման և իրականացման բարելավման ուղղությամբ, ակտիվացնել ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքներին և խթանել ուսանող – բուհ համագործակցությունը:

Հարցաշարը ներառել է հարցեր, որոնց միջոցով նպատակ ենք ունեցել պարզելու ուսանողների բավարարվածությունը.

1. հետազոտական աշխատանքների բովանդակությունից և ռեսուրսներից,
2. հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ղեկավարի աջակցությունից,
3. կատարած աշխատանքից,
4. հետազոտական աշխատանքի կազմակերպումից,
5. հետազոտական աշխատանքի գնահատումից:

Հարցման օբյեկտիվության և ուսանողների անկաշկանդ մասնակցության նկատառումներով հարցումն իրականացվել է անանուն և առցանց եղանակով: Հարցմանը մասնակցել են հետազոտական աշխատանք իրականացրած 16 կուրսերի 56 ուսանողներ: Նշենք, որ հարցումն իրականացնելու գործընթացում ներգրավվել են ՄԿՈԱ բաժնին կից ուսանողական խմբի անդամները, ամբիոնների գործավարները, կրթական ծրագրերի ղեկավարները և կուրսերի ավագները: Ցավոք սրտի արդյունքում ունեցել ենք մասնակցության

բավականին ցածր ցուցանիշ, ինչն էլ առաջնահերթ խնդիրներից մեկն է, այն է ինչպես մոտիվացնել ուսանողներին նման ուսումնասիրություններին ակտիվ մասնակցելու համար: Նշենք, որ հումանիտար գիտությունների ֆակուլտետից հետազոտական աշխատանք կատարած 70 ուսանողներից մասնակցել են ընդամենը **24-ը**, որը կազմում է հարցմանը մասնակցածների 42.9%-ը, բնական գիտությունների ֆակուլտետի 38-ից **14-ը** (25.0%), տնտեսագիտության ֆակուլտետի 44-ից **13-ը** (23.2%) և կիրառական արվեստի ֆակուլտետի 36-ից **5-ը** (8.9%):

Արդյունքներն ամփոփվել են բաժնում:

Հետազոտության արդյունքների համեմատության և առավել իրական պատկեր ստանալու համար հարցում է իրականացվել նաև հետազոտական աշխատանքները ղեկավարած դասախոսների շրջանում: Հարցմանը մասնակցել են հետազոտական աշխատանքներ ղեկավարած 19 դասախոսներ:

Ամբիոնի անունը	**Ընդ. թիվը /Մասն. թիվը**
Դեկորատիվ Կիրառական արվեստ (ԴԿԱ)	6 /**5**
Ընդհանուր տնտեսագիտության (ԸՏ)	4 /**3**
Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների (ԾԻՏ)	2 /**2**
Հայոց պատմության և հասարակագիտության (ՀՊՀ)	2 /**2**
Մանկավարժության և հոգեբանության (ՄՀ)	4 /**4**
Տուրիզմի կառավարման և մշակութաբանության (ՏԿՄ)	2 /**1**
Օտար լեզվի (ՕտԼ)	**6 /2**
Ընդամենը՝	**26 /19**

Հարցման արդյունքները ներկայացված են համեմատական կարգով, դրանք ներկայացված են նախորդ ուսումնական տարվա նույն՝ առաջին կիսամյակում ստացված արդյունքների հետ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետազոտական աշխատանք կատարող ուսանողների կարգավիճակը և դասընթացները գրեթե նույնն են:

Այժմ ուշադրության արժանի առանձին գործընթացների վերաբերյալ ներկայացնենք հարցման ամփոփ արդյունքները և դրանց վերլուծությունը: Նախապես ուշադրություն հրավիրենք այն փաստի վրա, որ ներկայացված արդյունքներն ուսանողների փոքր խմբի կարծիքներն են, բայց վստահաբար կարող ենք ասել, որ դրանք շահագրգիռ և ուսումնական գործընթացում ակտիվ ներգրավված ուսանողների կարծիքներ են և կարելի է դիտարկել որպես արժանահավատ արդյունքներ:

1. Բավարարվածությունը հետազոտական աշխատանքների բովանդակությունից և ռեսուրսներից

Այս բաժնում ուսումնասիրվել է ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքների համար թեմաների ընտրության, կազմակերպման գործընթացին:

Նախորդ ուսումնական տարվա համեմատ ուսանողների մասնակցությունը թեմաների առաջադրման գործընթացում աճել է, ինչը վկայում է հետազոտական աշխատանքների նկատմամբ հետաքրքրության բարձրացման և այդ գործընթացում նրանց ինտեգրման մասին: Ընդ որում, հարցմանը մասնակցած հետազոտական աշխատանքների ղեկավարներից **79%-ը** փաստել է, որ ուսանողներն ամբողջությամբ կամ մասամբ մասնակցել են թեմաների առաջադրմանը, դա փաստել է նաև ուսանողների **75%-ը**:





Թեմայի արդիական և հետաքրքիր լինելը խթանում և մոտիվացնում է, ներգրավում է ուսանողին ստեղծագործական աշխատանքի մեջ, բարձրացնում է նրա ձգտումն ինքնուրույն աշխատելու և արդյունքի հասնելու հարցում: Հետևաբար, հետազոտական աշխատանքը պետք է հնարավորինս լինի ուսանողի նախասիրությունների և հնարավորությունների շրջանակներում:

Նշենք, որ այստեղ մենք արձանագրել ենք, որ հարցման մասնակիցների մի խումբ՝ **15 ուսանող** (29%) իր աշխատանքը կատարել է, որովհետև այն ուղղակի հանձնարարվել է, իսկ **26-ը** կատարել է, որովհետև ուղղակի հետաքրքիր թեմա է եղել, այսինքն ոչ թե նպատակային է եղել հետազոտական աշխատանքը կամ նախասիրությունների շրջանակում, այլ ուղղակի կատարել են, որովհետև այն կազմում է իրենց ուսումնառության բաղկացուցիչ մասը:

Ոքանո՞վ ձեզ հետաքրքրեց առաջադրված հետազոտական աշխատանքի թեման.	ԲԳՖ	ԿԱՖ	ՀԳՖ	ՏԳՖ	Ընդ.
այն իմ նախասիրությունների շրջանակում էր	2	1	5	2	**10**
ուղղակի հետաքրքիր թեմա էր	6	1	12	7	**26**
կատարեցի, քանի որ հանձնարարվել էր	6		5	4	**15**
անհետաքրքիր էր			1		**1**
Ընդամենը	**14**	**2**	**23**	**13**	**52**

Առավել ևս, նրանց հիմնական մասը՝ **34 ուսանող** (65.4%) **<u>չի ցանկացել</u>** հետագայում աշխատել հանձնարարված թեմաների շուրջ:

Ուրախությամբ պետք է նշել, որ աշխատանքների ամբողջությամբ հետազոտական լինելու հետ կապված ուսանողները ճիշտ են գնահատել աշխատանքների պահանջները և նրանց կարծիքները համընկնում են աշխատանքների վերաբերյալ դասախոսների կարծիքների հետ: Նրանց **56%-ը** և դասախոսների **58%-ը** (11-ը) գտնում են, որ հանձնարարված աշխատանքներն ամբողջությամբ հետազոտական աշխատանքներ են եղել, իսկ ուսանողների 35%-ը գտնում է, որ իր աշխատանքն ավելի շուտ ինքնուրույն աշխատանք էր, քան հետազոտական, 5 ուսանող չի կողմնորոշվել:

Այստեղ պետք է փաստել, որ իրականացված աշխատանքներից բոլորը չէ, որ բավարարում են հետազոտական աշխատանքի պահանջներին, այդ մասին գրել են նաև ղեկավար-դասախոսները: Նրանցից **7-ը** (36.8%-ը) փաստել են, որ իրենց հանձնարարած աշխատանքներն ավելի շուտ եղել են ինքնուրույն աշխատանքներ:

Սա նշանակում է, որ ամբիոնների վարիչները պետք է **<u>հետևողական լինեն</u>** թեմաների հաստատման ժամանակ, իսկ դասախոսներն անպայման իրենց աշխատանքերում կարևորեն հետազոտական բաղադրիչի, հետազոտական տարրերի առկայությունը:

Հետազոտական աշխատանքի առաջնահերթ նպատակն է ուսանողի մոտ ձևավորել և զարգացնել գործնական կարողությունները և մասնագիտական հմտությունները: Այստեղ նույնպես պետք է փաստել, որ հետազոտական աշխատանքի իրականացումը կատարել է իր

առաջնահերթ խնդիրը: Նշենք, որ ուսանողներն ընդհանուր առմամբ **բավարարված են** հետազոտական աշխատանքի իրականացումից, որովհետև այս հարցին պատասխանած 52 ուսանողներից 37-ը նշել են, որ այն իրենց տվել է ինքնուրույն աշխատելու ունակություններ, 32-ը՝ նոր գիտելիքներ, 27-ը՝ վերլուծելու կարողություններ, 25-ը՝ գործնական կարողություններ, 24-ը՝ դատողություններ և եզրակացություններ կատարելու ունակություններ: Սակայն պետք է փաստել, որ հարցմանը մասնակցած միայն **20 ուսանող և 11 ղեկավար** է նշել, որ հետազոտական աշխատանքի իրականացման արդյունքում ուսանողը ձեռք է բերել մասնագիտական հմտություններ և այդ խնդիրն ակնհայտ երևում է բոլոր ֆակուլտետների համար: Այսինքն ընտրված թեմատիկան, կամ կատարման ընթացքն առանձնապես չեն նպաստում մասնագիտական հմտությունների զարգացմանը:

	ԲԳՖ/14	ԿԱՖ/2	ՀԳՖ/23	ՏԳՖ/13	ԵՊՀ ԻՄ/52	%
նոր գիտելիքներ	12	1	10	9	**32**	61.5%
գործնական կարողություններ	4		12	8	**24**	46.2%
մասնագիտական հմտություններ	**4**		**7**	**9**	**20**	**38.5%**
վերլուծելու կարողություններ	5	1	11	10	**27**	51.9%
ինքնուրույն աշխատելու ունակություններ	9	1	15	12	**37**	71.2%
դատողություններ և եզրակացություններ կատարելու ունակություններ	4	2	9	9	**24**	46.2%

Հարցման արդյունքները բացահայտեցին հետևյալ հանգամանքը, որ հարցմանը մասնակցած ուսանողներից **10-ը** (6-ը բնական գիտությունների ֆակուլտետից, 2-ը՝ հումանիտար գիտությունների, 2-ը՝ տնտեսագիտության), այդպես էլ չեն կարողացել մինչև վերջ հաղթահարել աշխատանքը, իսկ 27-ը այն հաղթահարել են հեշտությամբ: Նշենք, որ ուսանողների կողմից չհաղթահարելու մասին գրել են միայն տնտեսագիտության ֆակուլտետի դասախոսները:



Արդյունքները ցույց են տալիս, որ այս կիսամյակում **ավելի շատ ուսանողներ չեն հաղթահարել** և մինչև վերջ չեն կատարել աշխատանքը:

Այսինքն, այստեղ ամբիոնները **թեմաների բարդության** հետ կապված խնդիրներ ունեն: Դասախոս-ամբիոն համագործակցության արդյունքում արդյո՞ք բացահայտվել են այն պատճառները, որոնք խանգարել են ուսանողին կատարել աշխատանքը, թե նա ուղղակի չի կատարել, կամ իր հնարավորություններից բարձր է եղել և այլն:

Ամբիոնների վարիչներին **առաջարկում ենք** հետևողական լինել հետազոտական աշխատանքների թեմաների ընտրության, նրանց բարդության, ուսանողների կողմից դրանց իրականացման ընթացքի և որակի հարցում: Ուսանողների հետ պարբերաբար կազմակերպել հանդիպում-քննարկումներ՝ ուղղորդելով նրանց ճիշտ աշխատելու և հետազոտելու գործում, նրանց մոտ բարձրացնել մոտիվացիան և հետազոտական աշխատանքի կարևորությունը:

2. Բավարարվածությունը հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ղեկավարի աջակցությունից

Աշխատանքի իրականացման գործընթացում շատ կարևոր է ղեկավարի ճիշտ դիրքորոշումը և աջակցության ձևն ու չափը: Նախ ուսանող-ղեկավար համագործակցության մեջ ուսանողը պետք է հստակ գիտակցի իր ինքնուրույն աշխատելու կարևորությունն ու պահանջը, և ճիշտ գնահատի այն իրավիճակները, որտեղ պետք է ակնկալի ղեկավարի աջակցությունը: Իսկ ղեկավարները պետք է ուսանողներին սովորեցնեն ինչպես աշխատել ինքնուրույն և ինչպես հասնեն արդյունքների:

Հետազոտական աշխատանք կատարելու երկու տարիների փորձը և ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ մեր ուսանողները ղեկավարներից ավելի մեծ աջակցություն են ակնկալում, քան կարելի է: Այդ պատճառով էլ բավարարված չեն ղեկավարների աջակցությունից:

Գնահատեք դասախոսի աջակցությունը.	**ԲԳՖ/14**	**ԿԱՖ/2**	**ՀԳՖ/23**	**ՏԳՖ/13**	**ԵՊՀ ԻՄ/52**
հետազոտական մեթոդների ընտրության գործում	3.58	3.50	3.72	**3.08**	**3.49**
վերլուծությունների կատարման ժամանակ	3.86	3.50	3.61	**3.08**	**3.53**
գրականության և մեթոդական նյութերի ընտրության գործում	3.43	3.50	3.79	**3.00**	**3.42**
աշխատանքի արդյունքների ձևակերպման ժամանակ	3.93	3.50	3.67	**3.17**	**3.61**
Միջ.գն.	**3.70**	**3.50**	**3.70**	**3.08**	**3.51**

Նրանք **ղեկավարների աջակցությունը** հետազոտական մեթոդների ընտրության գործում, վերլուծությունների կատարման ժամանակ, գրականության և մեթոդական նյութերի ընտրության գործում, աշխատանքի արդյունքների ձևակերպման ժամանակ գնահատել են բավականին ցածր միավորներով և միջին գնահատականները բոլորի համար ցածր է 4-ից: Հատկապես ընդգծված ցածր են տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների տված գնահատականները: Եվ հատկապես ուսանողները բավարարված չեն գրականության և մեթոդական նյութերի ընտրության գործում ղեկավարների աջակցությունից: Այդ մասին ուսանողները հատուկ նշել են բաց հարցերում, որ բախվել են խնդիրների օտարալեզու գրականության հետ կապված, որ թարգմանություններն իրենցից բավականին ժամանակ են խլել, իսկ հայերեն լեզվով նյութերը չեն բավարարել թեմայի լիարժեք ներկայացման համար, զգացվել է գրականության և անհրաժեշտ նյութերի պակաս, չեն կարողացել գտնել համապատասխան աղբյուրները և այլն:

Համեմատական արդյունքները ցույց են տալիս, որ այս ուսումնական տարվա արդյունքները նույնիսկ ցածր են նախորդ ուստարվա նույն ժամանակահատվածի արդյունքներից:



Պետք է փաստել, որ ղեկավարներն իրենք էլ իրենց աջակցությունն առանձնապես բարձր չեն գնահատել, այստեղ ուսանողներին աջակցելու իրենց աշխատանքը բավականին ցածր են գնահատել հայոց պատմության և հասարակագիտության 2 և մանկավարժության և հոգեբանության ամբիոնների հարցմանը մասնակցած 4 դասախոսները:

11. Գնահատեք Ձեր աջակցությունը ուսանողներին.	**ԴԿԱ**	**ԸՏ**	**ԾԻՏ**	**ՀՊՀ**	**ՄՀ**	**ՏԿՄ**	**ՕտԼ**	**ԵՊՀ ԻՄ**
1. հետազոտական մեթոդների ընտրության գործում	4.20	5.00	4.50	3.00	4.00	5.00	4.50	**4.26**
2. վերլուծությունների կատարման ժամանակ	3.80	4.67	4.50	2.00	3.50	5.00	4.00	**3.84**
3. գրականության և մեթոդական նյութերի ընտրության գործում	4.00	4.67	3.50	3.50	3.75	5.00	5.00	**4.11**
4. աշխատանքի արդյունքների ձևակերպման ժամանակ	3.80	4.00	4.00	3.00	3.50	5.00	4.00	**3.83**
Միջ.գն.	**3.95**	**4.58**	**4.13**	**2.88**	**3.69**	**5.00**	**4.38**	**4.01**

Եվ համեմատելով ուսանողների և դասախոսների արդյունքները, այնուամենայնիվ, նկատում ենք, որ դասախոսներն իրենց աջակցությունը գրեթե բոլոր հարցերում գնահատել են ավելի բարձր (միջինը մոտավորապես 4 միավոր), քան ուսանողները:



Օրինակ, ուսանողները խնդիրների են բախվում աշխատանքի վերջնական տեսքի բերելու, թերությունները շտկելու, եզրակացությունները ճիշտ և բովանդակային ներկայացնելու մեջ: Մի քանի ուսանողներ գրել են, որ կամ դասախոսները չեն աջակցել, կամ չեն կարողացել խորհրդակցել դասախոսի հետ, կամ աշխատանքում առկա թերությունները չեն շտկվել ընթացքում, ինչը ազդել է գնահատականի վրա, մեկ կիսանյակում կատարել են 2 հետազոտական աշխատանք և այլն: Նրանք առաջարկում են, որ հետազոտական աշխատանքի ղեկավար լինեն պատրաստակամ, ուսանողներին ուղղորդող, հետևողական, ուշադիր դասախոսները:

Նմանատիպ խնդիրները, չենք բացառում, որ պայմանավորված են հետազոտական աշխատանքներ ղեկավարող դասախոսների մեծ բեռնվածությամբ, ինչի մասին բարձրաձայնել են նաև դասախոսները: Նրանք նշել են, որ մեծ թվով ուսանողների հետ մեկ ղեկավարը արդյունվետ չի կարող աշխատել:

Նաև այդ արդյունքները կարող են պայմանավորված լինել ղեկավարի գործառույթների վերաբերյալ ուսանողների ոչ ճիշտ պատկերացմամբ:

Այնուամենայնիվ, այստեղ երկկողմանի խնդիրներ կան, որոնք նաև բովանդակային են և անհրաժեշտ են նոր մոտեցումներ և նոր լուծումներ, մասնավորապես հետազոտական աշխատանքներ ղեկավարող դասախոսների բեռնվածության նորմերի վերանայման հետ կապված:

3. Բավարարվածությունը ուսանողի կատարած աշխատանքից

Ուսանողների կատարած աշխատանքից բավարարվածության արդյունքները նախորդ բաժնի արդյունքների նույն պատկերն են արտացոլում: Ուղղակի, եթե դասախոսների աջակցության հարցում ուսանողների գնահատականներն էապես ցածր էին դասախոսների գնահատականների հետ համեմատած, ապա ուսանողների ինքնուրույնության հարցում այդ գնահատականներն առանձնապես չեն տարբերվում:

Նախ արդյունքները ցույց են տալիս, թե ուսանողները հետազոտական աշխատանքի իրականացման և արդյունքների ձևակերպման ո՞ր գործընթացում են դժվարացել, և որը հաղթահարել հեշտությամբ: Ե՛վ դասախոսները, և՛ ուսանողները վկայել են, որ ուսանողների մոտ հիմնականում <u>**չի ստացվել**</u> ինքնուրույն ձևակերպել աշխատանքի նպատակն ու խնդիրները (համապատասխանաբար **3.42 և 3.49** միջին գնահատականներ), ինքնուրույն պլանավորել հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքը, գնահատել թեմայի արդիականությունը և նշանակությունը: Ղեկավարները բարձր են գնահատել ձեռք բերած արդյունքները և կատարած աշխատանքը ներկայացնելու ուսանողների կարողությունները (համապատասխանաբար **4.11 և 4.17** միջին գնահատականներ):

Հարցման արդյունքները վկայում են, որ ուսանողներն առավել պահանջկոտ են եղել իրենց և իրենց կատարած աշխատանքի հարցում և բավարարված չեն իրենց ինքնուրույն աշխատելու կարողություններից: Թվային տեսանկյունից այս արդյունքները միգուցե ցածր են, սակայն անուղղակի փաստում են ուսանողների ձգտումների, ցանկությունների, ավելիին հասնելու մասին, սեփական թերություններն ընկալելու մասին: Կարևոր է, որ ուսանողները ճիշտ հետևություններ կատարեն և հաջորդ հետազոտական աշխատանքները կատարելուց շտկեն թերությունները, բարելավեն ինքնուրույն աշխատելու իրենց կարողությունները և այլն:

Որքանո՞վ է ուսանողների մոտ ստացվել.	դաս.	ուս.
1. ինքնուրույն պլանավորել հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքը	3.53	**3.61**
2. ինքնուրույն ձևակերպել աշխատանքի նպատակն ու խնդիրները	**3.42**	**3.49**
3. ինքնուրույն գնահատել թեմայի արդիականությունը և նշանակությունը	3.68	3.53
4. ինքնուրույն հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվությունը	4.05	3.63
5. օգտվել անհրաժեշտ գրականությունից	4.06	3.85
6. ինքնուրույն ներկայացնել ձեռք բերված արդյունքները	4.11	3.84
7. ինքնուրույն ձևակերպել եզրակացությունը	3.74	3.73
8. ներկայացնել իր կատարած աշխատանքը	4.17	3.80

Այդ խնդիրները հաղթահարելու համար ամբիոնները պետք է ուսանողներին ապահովեն անհրաժեշտ խորհրդատվությամբ, կազմակերպեն հանդիպում-քննարկումներ:

Նշենք, որ ինքնուրույն աշխատելու վերաբերյալ ուսանողների գնահատականները ցածր են նաև նախորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակի արդյունքներից:





Ենթադրում ենք, որ այստեղ <u>լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտություն</u> կա, պարզաբանելու համար, թե ինչու՞ ուսանողների մոտ չի ստացվում աշխատել ինքնուրույն, ներկայացնել սեփական տեսակետներ, կատարել վերլուծություններ և եզրակացություններ: Կարո՞ղ է արդյոք այն կախված լինել հետազոտական աշխատանքի կազմակերպման ձևից:

4. Բավարարվածությունը հետազոտական աշխատանքի կազմակերպումից

Հարցման շրջանակներում ուսումնասիրել ենք նաև աշխատանքների կազմակերպման ձևերը: Պետք է նշել, որ դասախոսներն առավելությունը տալիս են անհատական աշխատանքի ձևին, գտնում են, որ այն ավելի արդյունավետ է և հիմնավորում են նրա առավելությունը: Օրինակ, նրանք նշում են, որ.

- անհատական աշխատանքը հեշտ վերահսկելի է, հստակ ստուգվող և գնահատվող,
- ուսանողի ունակություններից կախված դասախոսն ավելի հեշտ է աշխատում և հանձնարարությունները լինում են ուղղորդված,
- անհատական աշխատանքներն ավելի լավ են բացահայտում ուսանողի ձեռբերումները, հնարավորություն են տալիս ուսանողին դրսևորվել, գործել ինքնուրույն, ներկայացնել իր հնարավորությունները,

- ավելի հեշտ է ստանալ հետազոտական պատկեր, և ավելի հեշտ է գահատել աշխատանքը,
- անհատական աշխատանքների դեպքում ուսանողը կարողանում է գիտակցել սեփական աշխատանքի գնահատականի օբյեկտիվությունը:

Իսկ ահա խմբային աշխատանքի դեպքում խմբի ոչ բոլոր ուսանողներն են նույն բեռնվածությամբ աշխատում, որի արդյունքում դժվարություններ են ստեղծվում աշխատանքի ներկայացման և գնահատման հետ կապված:

Այս հարցման արդյունքներով 57 ուսանողներից **44-ը** կատարել է անհատական հետազոտական աշխատանք, ընդորում նրանցից **22-ը** նշել է, որ կնախընտրեր ոչ անհատական տարբերակը, և որպես հիմնավորում, օրինակ, ուսանողները նշել են. խմբային աշխատելն ավելի հեշտ է, ավելի հետաքրքիր է դառնում, ավելի արագ են նյութերը հավաքվում, կան աշխատանքներ, որոնք պահանջում են մի քանի ուղեղ: Խմբային աշխատանքները սովորեցնում են համատեղ աշխատել և ներկայացնել մտքեր և գաղափարներ, կատարել աշխատանքի բաժանում և ձևավորել ընդհանուր արդյունք:

Նշենք, որ ավելի մեծ մասն իր նախընտրությունը չի հիմնավորել:

Ուսանողներն ընդհանուր առմամբ իրազեկված են հետազոտական աշխատանք կատարելու **մեթոդաբանությունից**: Սակայն այս գործընթացը մշտապես ուշադրության կարիք ունի: Աշխատանքում ընթացիկ բարդություններ չառաջանալու համար, անհրաժեշտ է հենց սկզբից ապահովել ուսանողների իրազեկվածությունը հետազոտական աշխատանքների իրականացման և գնահատման գործող կարգի վերաբերյալ:



5. Բավարարվածությունը հետազոտական աշխատանքի գնահատումից

Հետազոտական աշխատանքների գնահատման գործընթացի առաջնային քայլը լիարժեք իրականացված է: 51 ուսանողների **95%-ը** տեղեկացված է եղել աշխատանքի գնահատման չափանիշներից, ընդ որում նրանց **61%-ը** չափանիշների մասին տեղեկացել է դասախոսից, իսկ 27%-ը՝ մասնաճյուղի պաշտոնական կայքէջից: Այստեղ պետք է նշել, որ մասնաճյուղի կայքը պահանջված է ուսանողների կողմից և նրանք իրենց հետաքրքրող տեղեկատվությունը կարողանում են ձեռք բերել կայքից:



Հարցմանը մասնակցած

ուսանողների գրեթե **50%-ը**՝ 25-ը, նշել է, որ հետազոտական աշխատանքի գնահատման չափանիշները մասամբ են ճիշտ ընտրված, այնուամենայնիվ, նրանցից 15-ը բավարարված է իր ստացած գնահատականից, որովհետև այն համապատասխանում է իր կատարած աշխատանքին, իսկ մնացած 10-ը բավարարված չէ իր ստացած գնահատականից, որովհետև այն չի համապատասխանում իր կատարած աշխատանքին: Ընդհանուր առմամբ, հարցին պատասխանած 50 ուսանողներից **37-ը** (74%-ը) բավարարված է իր ստացած գնահատականից (այդ թվում 4 ուսանողի համար ստացած գնահատականն իր սպասումներից բարձր է եղել):



Նշենք, որ հարցմանը մասնակցած 19 **դասախոսներից 12-ը** նույնպես փաստել են, որ գնահատման չափանիշները մասամբ են ճիշտ ընտրված, իսկ **16-ը** (84%-ը) հաստատել են, որ ուսանողները գնահատվել են օբյեկտիվ, իրենց կատարած աշխատանքին համապատասխան, ինչը բարձր է ուսանողների արդյունքներից:

Այսինքն, հետազոտական աշխատանքի գնահատումից ուսանողների բավարարվածության արդյունքները զիջում են դասախոսների կողմից նշված արդյունքներին:

Նշենք, որ հետազոտական աշխատանքի գնահատումից ուսանողների բավարարվածության այս ուսումնական տարվա 1-ին կիսամյակի արդյունքները (**74%**) ցածր են նաև նախորդ ուսումնական տարվա նույն կիսամյակի արդյունքներից (**89%**):



Այս արդյունքները վկայում են, որ **<u>խնդիր ունենք</u>** հետազոտական աշխատանքների գնահատման ընտրված չափանիշների հետ: Գնահատումը՝ լինելով սուբյեկտիվ գործընթաց, լիարժեք հստակեցնել, միգուցե, անհնար է, սակայն քայլեր պետք է ձեռնարկվեն: Ամբիոններում (նաև ուսանողների հետ) ՄԿՈԱ բաժնի և կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի հետ միասին պետք է նորից կազմակերպել քննարկումներ՝ գնահատման չափանիշներն ավելի հստակ, հասկանալի և կիրառելի դարձնելու համար:

Այն հարցին, թե «հետազոտական աշխատանքի գնահատման ժամանակ դասախոսները հատկապես ինչն են բարձր գնահատել», իսկ դասախոսներին ուղղված այն հարցին, թե «աշխատանքի գնահատման ընթացքում հատկապես ինչն է բարձր գնահատվել» **ուսանողների 61%-ը** և դասախոսները գրեթե միաձայն նշել են <u>ներկայացված վերլուծությունները</u>: Այստեղ նույնպես ուսանողները ևս մեկ անգամ բարձրացրել են եզրակացություններ կատարելու հետ կապված իրենց ունեցած խնդիրները:

Ուսանողի աշխատանքում հատկապես ի՞նչն է բարձր գնահատվել	Ուսանողներ /48		Դասախոսներ /19	
	Քան.	%	Քան.	%
աշխատանքի ներկայացումը	27	56.3%	13	68.4%
ինքնուրույնությունը	27	56.3%	17	89.5%
արդյունքների հիմնավորվածությունը և հավաստիությունը	23	47.9%	8	42.1%
հավաքագրված տվյալները	26	54.2%	8	42.1%
եզրակացությունները	19	39.6%	12	63.2%
ներկայացված վերլուծությունը	29	60.4%	17	89.5%

Եղել են նաև այլ պատասխաններ, մասնավորապես ուսանողը նշել է, որ իր աշխատանքում բարձր է գնահատվել աշխատանքում առկա հարուստ գրականությունը և ճիշտ կատարված հղումները, մեկ այլ ուսանող բողոքել է, որ իր գնահատականը չի պարզաբանվել:

Ներկայացնում ենք հետազոտական աշխատանքների իրականացման և գնահատման գործընթացի հետ կապված ուսանողների և դասախոսների նշած **խնդիրները** և այդ գործընթացների բարելավմանն ուղղված նրանց **առաջարկները**:

Դասախոսներ	
Ի՞նչ խնդիրների եք հանդիպել հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում:	Ի՞նչ առաջարկներ ունեք հետազոտական աշխատանքի կազմակերպման և իրականացման բարելավման համար:
Դեկորատիվ Կիրառական արվեստի ամբիոն /5 մասնակից/	
1. Մասնագիտական գրականության պակաս:	1.Հետազոտական աշխատանքը զատել դասընթացից և դարձնել անկախ՝ կուրսային աշխատանքի նման և նրա գնահատականը չներառել դասընթացի միավորների մեջ:
2. Հենց հետազոտական բառը սխալ է, քանի որ ուսանողներն այս մակարդակում կատարում են ավելի շուտ ուսումնասիրություն, քան հետազոտություն:	2.Հատկացնել հավելյալ ժամեր հետազոտական աշխատաքի կատրման համար:
3. Ուսանողների բեռնվածությունը՝ դասընթաց+ՀԲ+պրակտիկա, մասամբ ազդում է դասընթացի որակի վրա:	3.Հետազոտական բաղադրիչներ ունենան շատ ժամաքանակ ունեցող առարկաները:
Ընդհանուր տնտեսագիտության ամբիոն /3 մասնակից/	
1. Ամենամեծ խնդիրը վերլուծության համար անհրաժեշտ տվյալների հասանելիությունն է:	1.Դասախոսները ղեկավարեն մինչև 10 հետազոտական աշխատանք:
2. Դասախոսի բեռնվածությունը շատ է: Հանդիպումներն ամբողջ կուրսով աննպատակահարմար են: Մենք աշխատել ենք անհատապես յուրաքանչյուր խմբի հետ առանձին:	2.Գոյություն ունեն տարբեր տվյալների բազաներ, որտեղից ուսանողները կարող են ներբեռնել կազմակերպության տվյալներ և հաշվետվություններ, որը հնարավորություն կընձեռի նրանց կատարել պահանջվող վերլուծությունները: Առաջարկում եմ բաժանորդագրվել համապատասխան ռեսուրսներին:
3. Մեթոդաբանության ճիշտ կիրառումը պահանջում էր լրացուցիչ բացատրություններ ղեկավարի կողմից:	
Հայոց պատմության և հասարակագիտության /2 մասնակից/	
1. Մեծ թվով ուսանողների հետ մեկ ղեկավարն արդյունվետ չի կարող աշխատել: Դասընթացի գնահատման ցանկացած ձևի դեպքում հետազոտական աշխատանքը գնահատվի նույն սանդղակով:	
Մանկավարժության և հոգեբանության ամբիոն /4 մասնակից/	
1. Ուսանողները խնդիր ունեն տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հետ:	1.Համատեղել տեսականը և գործնականը
2. Խնդիրները կապված էին ուսանողների կողմից հետազոտության արդյունքների	2.Հետազոտական աշխատանք կատարելու համար ժամանակը պետք է ավելի երկար տրվի և

վերլուծության դժվարության հետ	գնահատականը լինի 10 միավոր, ավելի բարձր, կատարված աշխատանքը և գնահատականը իրար հետ չեն հարաբերակցվում:
	3.Վերանայել աշխատանքի կառուցվածքին և ծավալին վերաբերող հարցերը /2/:
Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոն /1 մասնակից/	
1.Վերանայել հետազոտական աշխատանք-ների իրականացման և գնահատման կարգը:	1. Վերականգնել կուրսային աշխատանքները:

Ուսանողներ	
Ի՞նչ խնդիրների եք հանդիպել հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում:	**Ի՞նչ առաջարկներ ունեք հետազոտական աշխատանքի կազմակերպման և իրականացման բարելավման համար:**
Բնական գիտությունների ֆակուլտետ	
1.Գրականության և նյութերի պակաս /2/:	1.Դասախոսն ավելի շատ ժամանակ հատկացնի ուսանողների հետ քննարկումներին:
2.Օտարալեզու գրականությունից օգտվելը: Գրականությունը կամ ռուսերեն է, կամ ավելի հաճախ անգլերեն: Հայերեն նյութը ինձ չէր բավարարում, իսկ թարգմանությունը բավականաչափ ժամանակ էր խլում /2/:	2.Աշխատանքները լինեն նվազագույնը 10 միառրանոց: Նախքան թեմայի ընտրությունը դասախոսը կատարի թեմաների վերլուծություն:
3. Խնդրի անլուծելիություն:	3. Հետազոտական աշխատանքները նորություն են ուսանողների համար, կարծում եմ պետք է հետազոտական էլեմենտները շատացնել թեկուզ դասապրոցեսի ընթացքում՝ ավելի հետաքրքացնելով դասի անցկացումը:
	4.Հետազոտական աշխատանքները լինեն անհատական:
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	
1.Աղբյուրներ գտնելու դժվարությունը, նյութերի սակավությունը /3/:	1.Հետազոտական աշխատանքը շատ հետաքրքիր աշխատանք է և լավ կատարելու դեպքում՝ ժամանակատար, հետևաբար պետք է գնահատումը լինի համարժեք կատարած աշխատանքին:
2.Ղեկավարի աջակցության բացակայություն:	2.Դասախոսն ավելի հետևողական և ուշադիր լինի յուրաքանչյուր ուսանողի աշխատանքին՝ առաջացող խնդիրներից խուսափելու համար/2:
3. Եզրակացություն գրելը /2/:	3.Աշխատանքի ղեկավար ընտրել միայն պատրաստակամ դասախոսներին, ովքեր կօգնեն, կուղղորդեն ուսանողին:
4.Դասախոսի անտարբերությունը, նախապես թերությունները չեն ասվում և աշխատանքը ներկայացվում է թերություններով, ինչը ազդում է գնահատականի վրա:	4.Հետազոտական աշխատանքների փոխարեն լինեն կուրսային աշխատանքներ/2:
5. Ղեկավարի հետ կապի բացակայությունը:	
Տնտեսագիտության ֆակուլտետ	
1. Ընդհանուր հետազոտական աշխատանքը ինքը խնդիր է:	1. Հետազոտական աշխատանքի ծավալը քչացնել, քանի որ կիսամյակի ընթացքում երբեմն կատարվում են 2 հետազոտական աշխատանքներ:
2. Թեմայի վերաբերյալ քիչ նյութերը:	2. Հետազոտական աշխատանքները գնահատել նույն միավորներով:
3. Օտարալեզու գրականությունից օգտվելը, որը թարգմանելու ժամանակ իմաստային սխալների բերում:	

Ամփոփելով հետազոտական աշխատանքի իրականացումից և գնահատումից ուսանողների և դասախոսների բավարարվածության հարցման արդյունքները կարող ենք նշել, որ **խնդիրներ կան**.

- թեմաների բարդության հետ կապված, որովհետև ուսանողները կամ չեն հաղթահարել, կամ հեշտությամբ են հաղթահարել հետազոտական աշխատանքը (իհարկե այստեղ չենք բացառում նաև ուսանողների անհատական գործոնները),
- աշխատանքի իրականացման ժամանակ ղեկավարների աջակցության չափի և ձևի հետ կապված, և ստացված ցածր արդյունքները կարող են պայմանավորված լինել ղեկավարի գործառույթների վերաբերյալ ուսանողների ոչ ճիշտ պատկերացմամբ կամ անտեղեկացվածությամբ,
- հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքի պլանավորման, նպատակի ու խնդիրների, թեմայի արդիականության և նշանակության ինքնուրույն ձևակերպման հետ,
- հետազոտական աշխատանքի ձևի ընտրության հետ կապված՝ անհատական, թե խմբային,
- հետազոտական աշխատանքի գնահատման չափանիշների հետ կապված։

Կատարված վերլուծության արդյունքերից ելնելով աբիոնների վարիչներին և հետազոտական աշխատանքներ ղեկավարող դասախոսներին **առաջարկում ենք.**

- հետևողական լինել հետազոտական աշխատանքների թեմաների ընտրության, նրանց բարդության, ուսանողների կողմից դրանց իրականացման ընթացքի և որակի հարցում,
- ուսանողներին ապահովել անհրաժեշտ խորհրդատվությամբ, կազմակերպել հանդիպում-քննարկումներ, ներկայացնել հետազոտական աշխատանքի իրականացման և գնահատման չափանիշները,
- ուսանողներին ուղղորդել, սովորեցնել ինքնուրույն աշխատելու և ձևակերպելու հետազոտության արդյունքները, կատարելու եզրակացություններ և այլն,
- ներկայացնել հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ուսանողի և ղեկավարի գործառույթները։

Վեր հանված խնդիրների համար լուծումներ գտնելու և առաջարկելու համար ՄԿՈԱ բաժինը նախատեսում է.

- ✓ կազմակերպել հանդիպումներ հետազոտական աշխատանք կատարած և կատարող ուսանողների հետ և նրանց հետ քննարկել հարցման արդյունքները,
- ✓ հետազոտական աշխատանքներ ղեկավարած դասախոսների հետ կազմակերպել քննարկումներ գնահատման չափանիշների հետ կապված,
- ✓ ուսումնասիրել և պարզել ուսանողների ինքնուրույն աշխատելու հետ կապված խնդիրները, կամ պատճառները,
- ✓ ուսումնասիրել և պարզել նախորդ ուստարվա հետ համեմատած ընթացիկ կիսամյակի ցածր արդյունքների պատճառները,
- ✓ կազմել առաջարկությունների փաթեթ և ներկայացնել ամբիոններ քննարկման։

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին